ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2825-2020 գրությամբ Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 20.02.2020թ. թիվ Ե/40/306-20 գրության հիման վրա, 27.02.2020թ. թիվ 26/26-1/2825-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/39 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.02.2020թ. թիվ Ե/40/306-20 գրությամբ հայտնել է, որ կանաչապատման և բարեկարգման ծառայությունների մատուցման նպատակով՝ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-11/20» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում ս.թ. փետրվարի 7-ին Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանի կողմից ներկայացվել է ընթացակարգին մասնակցելու հայտ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 9-րդ ենթակատեի համաձայն՝ մասնակիցը պետք է ներկայացներ նաև հայտի ապահովում բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Սակայն հայտերի բացման և գնահատման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են որոշակի անհամապատասխանություններ հրավերի պահանջներին (հրավերով սահմանված դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված չէ մասնակցի գործունեության հասցեն, հեռախոսահամարը և հարկ վճարողի հաշվառման համարը):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից կասեցվել է հայտերի գնահատման նիստը և Մասնակցին էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցվել է այդ մասին, առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անահամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել տվյալ անհամապատասխանությունը:

Պատվիրատուն նշել է, որ Մասնակցի կողմից խախտվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերությունը «եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ» և սահմանված ժամկետում չի ներկայացվել բանկային երաշխիքի բնօրինակը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/39 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-11/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11-13.02.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Մասնակցի հայտը մերժվել է:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2825-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 20.02.2020թ. թիվ Ե/40/306-20 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ա) և ե) պարբերությունների համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը:

ե) հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.4 հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝

առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի համաձայն՝ հայտերը բացվելուց և գնահատվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-11/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11-13.02.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Մասնակցի հայտով ներկայացված՝ Ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված N 1) բացակայում է հրավերով սահմանված մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն, հեռախոսահամարը:

Միաժամանակ նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից չի ներկայացվել հայտի ապահովման բնօրինակը, որի արդյունքում խախտվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության պահանջը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և 11.02.2020թ. Մասնակցի էլեկտրոնային հասցեի միջոցով ծանուցել վերջինիս մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11-13.02.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Հ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ա) և ե) պարբերությունների համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է՝***

ա) ***<u>գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը:</u>***

ե) հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: ***<u>Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ</u>***:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.4 հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Այսպիսով՝ Մասնակցի կողմից ներկայացված՝ Ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) բացակայում է հրավերով սահմանված Մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն, հեռախոսահամարը: Միաժամանակ Մասնակիցը Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը: Արձանագրում եմ, որ Մասնակիցը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելուց հետո, սահմանված ժամկետում չի ներկայացրել Ընթացակարգին մասնակցելու դիմում-

հայտարարության (Հավելված N 1) շտկված տարբերակը, ինչպես նաև հայտի ապահովման բնօրինակը:

Ընթացակարգի հրավերի 10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը</u>***, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>եթե</u>*** մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***<u>մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը</u>*** կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ***<u>ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանը «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-11/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2825-2020 գրությամբ Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Ալիկ Ազատի Նազարեթյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**